

ՂՈՒՋՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության

ինստիտուտի գիտաշխատող,

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ԳՊՀ դասախոս

Էլփոստ՝ lgrejyan@yandex.ru

ԲԱԳՈՅԱՆ ԱԼԼԱ

ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

Էլփոստ՝ allabagoyan@mail.ru

Երդումը, հնուց ի վեր հանդիսանալով հմայական - կիրառական բանահյուսության տեսակներից, տարածված է եղել աշխարհի բոլոր ժողովուրդների կենցաղում և ցայսօր էլ իր ուրույն տեղն ունի ժողովրդի կյանքի տարբեր բնագավառներում: Իբրև ցանկության հմայական խոսքեր՝ երդումներն օժտված են հմայական անկասելի զորությամբ և ուղղված են տվյալ առարկայի, անձի և իրադրության փոփոխությանը:

Ինչպես հմայական մյուս բանաձևերի (անեծք, օրհնանք, բարեմաղթություն), այնպես էլ երդման հիմքում ընկած է խոսքի հմայական զորության գաղափարը, որի վրա հենվելով՝ երդվողը վկայակոչում է նվիրական սրբություններն ու առարկաները, որոնք բոլոր ժամանակներում էլ ընդունված են եղել ժողովրդի կողմից:

Հմայական վերոնշյալ բանաձևերը շատ կողմերով առնչվում են ժողովրդի աշխարհընկալմանը, մասնավորապես հնագույն հավատալիքներին: Ժողովրդական հավատալիքները, լինելով հասարակական գիտակցության ձևերից, արդյունք էին պատմական տարբեր ժամանակաշրջաններում հասարակական կեցության որոշակի աստիճանի, և պայմանավորված տարբեր գործոններով՝ բնության ու հասարակական ուժերը մարդկային գիտակցության մեջ ձեռք էին բերում գերբնական, ֆանտաստիկ բնույթ: Սերելով հնագույն ժամանակներից՝ դրանք շարունակում են հարստանալ ժողովրդի գիտակցության մեջ այն չափով, որչափ կենսունակ են մնացել դրանք ստեղծող ու պահպանող հասարակական հիմքերը:

Մեր նպատակն է համակողմանի գիտական վերլուծության ենթարկել հայ ժողովրդական երդումների իմաստային, կառուցվածքային տիպերը և դրանց որոշակի դրսևորումները հեքիաթներում: Խնդիրն է ցույց տալ հեքիաթներում

հանդիպող բանաձևային վերոնշյալ կառույցի դերն ու կիրառման դրդապատճառները:

Բերված փաստերը հիմնավորելու և ճշգրիտ եզրահանգումներ կատարելու նպատակով կիրառվել են պարամահամեմատական, համադրական, տիպաբանական և վերլուծական մեթոդները:

Բանալի բառեր՝ հմայական–կիրառական բանահյուսություն, ծիսահմայական բանաձև, հեքիաթ, երդում, հավաքալիք, անեծք, վկայակոչում:

Երդումը՝ իբրև ժողովրդախոսակցական լեզվի ավանդական պատկերավոր բանաձև, ընդհանրապես կարևոր տեղ է գրավում տարբեր ազգերի բանավոր ստեղծագործությունների մեջ և իբրև ակտիվ կենցաղավարող ժանր՝ դրսևորվում է նաև ժողովրդական հեքիաթներում:

Հեքիաթներում երդումը հանդես է գալիս իր՝ երդման ուղղակի նշանակությամբ, անեծքաերդումային կառուցվածքով և երդումը՝ վկայակոչումով:

ա. Երդումն իր ուղղակի նշանակությամբ ընկալվել է իբրև հմայական խոսք, որից զգուշացել և որին հավատացել են ոչ միայն հայերը, այլև աշխարհի բոլոր ժողովուրդները՝ անկախ իրենց քաղաքակրթության աստիճանից: Օրինակ՝ **«Էս տղեն էր տեսավ՝ բաղվանչին շապ ա երթում ուրում, հավաքաց»¹, կամ՝ «Խնձորը վերցրին ձեռները, երթում ճերան, որ հառեչի անքամ են էսենց խնձոր տենում»², «Տղեն երդում կերավ, որ չի գողացե»³, «Էս հեղ երթում արա քու արևով, որ չխոսես...»⁴, «Երթմ կեր, որ էլ մարթի չասես»⁵:**

Հեքիաթներում ոչ միայն մեջբերվում են երդումներ, այլև ուղղակի նշվում է, որ հերոսը կամ հերոսուհին երդում են տալիս այս կամ այն պայմանով: Օրինակ՝ **«Սալին երդում կերավ, ասավ մինչև գլոխս շեմին չդնեն, կդրեն չեմ մադնի»⁶, «Էնպես երդում է կերել, որ, թե էնպես մեկ տղեմ էղավ, որ էկավ կրցավ իրան խոսեցնել տա, զաթի լավ՝ էնոր կառնի հեպը կը պսակվի, թե որ չէ՝ աշխարհք չը պտի մտնի»⁷ և այլն:**

Հեքիաթներում հաճախ են հանդիպում հավատարմության երդումների դրսևորումները: Օրինակ՝ **«Էրդում կուտեն՝ մեռնին՝ իրար հեպ, ապրին՝ իրար հեպ»⁸:**

¹Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ) հատ. XVIII, Երևան, 2016. էջ 249:

²Նշվ աշխ. էջ 255:

³ՀԺՀ հատ. II, Երևան, 1959, էջ 441:

⁴ՀԺՀ հատ. IV, Երևան, 1963, էջ 214:

⁵ՀԺՀ հատ I, Երևան, 1959, էջ 298:

⁶ՀԺՀ XVIII, Երևան, 2016. էջ 127:

⁷ՀԺՀ հատ. IV, Երևան, 1963, էջ 66:

⁸Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, 2013, էջ 283:

Ինչպես տեսնում ենք, երդումը այն սրբազան բարձրակետն է, որին հոժարությամբ ենթարկվում է և՛ երդվողը, և՛ երդվեցնողը:

Այստեղ արտահայտվում է հավատը խոսքի գործության հանդեպ, քանի որ ըստ ժողովրդի հայացքի՝ երդվելը (հատկապես սուտ երդվելը) մեղք է, և երդվողը ենթակա է չարաչար պատժի, որտեղից էլ «Էրդումը մեղք է, սուտ էրդումը՝ կրակ»¹ և «Սուտ երդում ուտողը կտուժի»² ժողովրդական ասացվածքները, իսկ «Սուտ ասողի գլխին երկնքից քար կընկնի»³: Ժողովրդական «Անդրանեկի խեղճաթը» ապացույցն է այս իրողության, որտեղ սուտ երդում տված «զարգյարը» տեղնուտեղը պատժվում է. «Զարգյար հարիր օխտանասուն տարեկան էր, հարուր մանեթի համար զարգյարն հորթվաց, պատռվավ»⁴:

Ուշագրավ է «Երդում ուտել» արտահայտությունը: Աշխարհի բոլոր ժողովուրդների մշակույթներում երդումը նույն գործառույթն ու նշանակությունն ունի: Սակայն շատ ազգերի մոտ այն տարբեր կերպ է արտահայտվում: Ի տարբերություն հայերի «Երդում ուտելուն»՝ որոշ ազգերի մոտ, հատկապես թյուրքալեզու, առկա է հիմնականում «Երդում խմել» արտահայտությունը, որտեղից էլ հավանաբար ծագել է հետևյալ հանելուկը. «Էն հի՛նչն ա.// Հայը կոտի,// Թորքը կըխմի»⁵:

Թյուրքալեզու ժողովուրդների մոտ երդման ծիսական արարողության ժամանակ, ինչպես նշում է պատմաբան, թարգմանիչ և անկախ հետազոտող Ալ. Յուրչենկոն «Թյուրքերը երդումը խմում էին բառիս ուղիղ իմաստով» (Тюрки клятву пили в буквальном смысле слова)⁶:

Արարողակարգի ժամանակ ոսկյա կամ արծաթե բաժակից խմում էին հեղուկը (ջուր, որի մեջ ոսկի էին զգում, կաթ՝ խառնված արյան կաթիլով, կամ շերբետ) և ասում էին հմայական բանաձևը: Մինչդեռ հայերի մոտ հավանաբար ընդունված է եղել ինչ-որ բան ուտելը, իսկ «Երդումը ջրի պես խմել» և նմանատիպ դարձվածքները նշանակում են երդմանը շատ թեթևամտորեն վերաբերվել:

բ. Անեծքաերդումային կառուցվածքով տարբերակը հանդիպում է հեքիաթներից մեկում, որտեղ ճարպիկ և հնարամիտ գողերը՝ գիտակցելով, որ բռնվելու դեպքում ստիպված են լինելու երդում տալ, կանխավ խաղարկում են իրավիճակ, որի պայմաններում իրենց երդումը ճշմարտացի կլինի: Այսպես, նրանցից մեկը շալակում է մյուսին, մտնում վարունգի մարզը, մյուսն էլ իր հերթին քաղում է վարունգը: Երբ դատարանում նրանց ստիպում են երդվել, նա, ով շալակն էր ելել ու

¹Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովեց Տիգ. Վարդանյանց, Թիֆլիս, 1900, էջ 79:

²Հարությունյանի Ս., Հայ ժողովրդական բանահյուսության նյութերի անձնական հավաքածու (ձեռագիր):

³Թումանյան Հովհ., Երկերի հատ. 5, Երևան, 1959, էջ 514:

⁴ԺՀ հատ. XVIII, Երևան, 2016. էջ 21:

⁵Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 202:

⁶<https://cyberleninka.ru/article/n/klyatva-dogovor-shertvovanie-v-mezhgosudarstvennyh-otnosheniyah-u-tyurko-tatar/viewer>

քաղել էր վարունգը, երգվում է. **«Թե իմ վրեպը քու խիյարկուպը մտած, կոխած ըլի, իմ թեխեքը կտորվեն»**: Շալակողն էլ երգվում է. **«Թե իմ կուռը քու խիյարը պուկած ըլի, իմ թեխեքն էլ կտորվեն»**: Այսինքն՝ հասարակական ըմբռնմամբ երգումը առավել մեծ ուժ և ազդեցություն ուներ, քան իրավական ցանկացած սանկցիա:

Մեկ այլ հեքիաթում էլ հերոսը եզան բերանի «ջավահիրաթ քարը» ձեռք բերելու համար է երգվում. **«Ես մեռնեմ, չանք էս քարը էս եզան ձեռնեն չառնեմ, ըստուց չեմ էթա»**¹: Բերված օրինակներում, ինչպես տեսնում ենք, երգվողները կամենում են իրենց մահվան դատապարտված տեսնել, եթե իրենք ճշմարիտ կամ իրավացի չեն: Այսպիսով, երգումն իր հիմքում պայմանական բնույթ է ստանում, որի խախտման դեպքում գործելու է անեծքը:

Անեծքաերգումային կառուցվածքով բանաձևերը բնորոշվում են պայմանի և հետևության հարաբերությամբ և իմաստային կապ ունեն պայմանով անեծքների հետ, այսինքն՝ բաղկացած են որոշակի պայմանից և իրադրությունից, սակայն այն տարբերությամբ, որ երգման մեջ էականը պայմանն է, մինչդեռ պայմանով անեծքներում իրադրությունն է գլխավորը: Պայմանով անեծքներում և՛ պայմանը, և՛ անեծքը ուղղված են անիծվողին, իսկ անեծքով երգման դեպքում և՛ պայմանի, և՛ անեծքի կրողը երգվողն է², այսինքն՝ անեծք-երգումն ինքնաբանադրանք է, հասարակական ըմբռնմամբ պայմանավորված մի վատ ցանկություն, որին հոժարությամբ ենթարկվում է առաջադրողը: Եվ այս առանձնահատկությունն էլ հենց միմյանցից տարբերակում է երգումն ու պայմանով անեծքը, որոնք նմանվում են միմյանց իրենց արտաքին կառուցվածքով:

գ. Հեքիաթներում երգման հաճախադեպ դրսևորումներից է **երդում-վկայակոչումը**

Մարդն իր իրավացիությունը հավաստելու համար դիմում է Աստծուն, սրբերին, որոնք ճշմարտության առաջին աղբյուրն են՝ երգվելով կամ վկայակոչելով նրանց:

Օրինակ՝ **«...աստված վկա, ես էդ աղջկան կրնամ խոսացնե...»**³, **«Ես ու իմ աստված»**⁴, **«Աստվածս վկա՛ ես էս ճամփով պըր էթամ»**⁵ և այլն:

Գարեգին Սրվանձտյանցի գրառած «Գառնիկ աղբերը» հեքիաթում ձկան փորում գտնվող աղջիկը ծայն է տալիս ժամհարին.

Դու քո բարի լուսու Աստված կը սիրես,

Երթաս թագավորի լաճուն խաբրիկ մը տանես.

Ասես.- Իմ գառնիկ աղբեր չը զենես⁶:

¹ՀԺՀ հատ. III, Երևան, 1962, էջ 233:

²Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975, էջ 138:

³ՀԺՀ հատ. IV, Երևան, 1963, էջ 66:

⁴Նույնի էջ 29:

⁵ՀԺՀ հատ. III, Երևան, 1962, էջ 264:

⁶Մանանայ, Ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց, Պոլիս, 1876, էջ 219:

Բերված օրինակում ընդգծված տողը երդմնեցուցչական բանաձև է, որն իր մեջ աղերսանք, խնդրանք և պարտադրանք է պարունակում: Աղջիկը խնդրում է ժամհարին՝ թագավորի տղային տեղեկացնել, որ իր եղբորը հանկարծ չվնասի:

Ժողովրդական «Հաբմանի» հեքիաթում հերոսն իրեն հետապնդող պառավին խնդրում է ազատ արձակել՝ «Պառավ,- ըսավ,-**դու քու աստվածդ**, իմ ճամբես մի կտրի, ես մուրազ ունիմ, թո՛ղ էրթամ իմ մուրագին հասնիմ»¹:

Երդման նմանատիպ բանաձևերի դրսևորումներ առկա են նաև ժողովրդական երդումների գրառված տարբերակներում, ինչպես օրինակ՝ «Թե աստվածդ կսիրես՝ մի անի», «Դու ըլնես ջիվան ջանդ, մի էրթա»² և այլն:

Ասվածի ճշմարտացիությունն ապացուցելու համար հեքիաթներում վկայակոչվում է ոչ միայն Աստված, այլ երկինքն ու գետինը, ինչը գալիս է հնագույն ժամանակներից հայոց մեջ ձևավորված աշխարհի երկմաս կառուցվածքի պատկերացումից: Օրինակ՝ «**Երկինք-գետինք, ես էս բանից խաբար չեմ**»³ կամ՝ «**Էրկինք, գետինք, աստված վկա**»⁴:

Երդումների մեջ արտացոլված հնագույն հավատալիքներից հատկանշական է հոգու պաշտամունքը, որը սկզբնապես կապված լինելով նախնական անիմիզմի հետ, հետագա դարերում զարգացման նորանոր ձևեր է ընդունում՝ հասնելով մինչև քրիստոնեական կրոնը:

Մարդիկ հաճախ **հոգի, խիղճ** հասկացությունները բացարձակապես նույնացրել են և չեն սահմանազատել, որտեղից էլ ըստ երևույթին առաջացել է «Կորի մարդու մալ, կորի մարդու հոգին» արտահայտությունը: Ըստ այսմ, երբ ինչ-որ բան կորցնելու դեպքում մարդ կորցնում է խիղճը և զրպարտում դիմացինին, դրանով մեղք է գործում՝ զրկվելով դրախտ գնալու իրավունքից, այսինքն՝ կորցնում է հոգին: Օրինակ՝ Գեղարքունիքի տարածաշրջանից գրառված հեքիաթներից մեկում հերոսն իր անտեղյակությունն ապացուցում է՝ երդվելով՝ «**էս իմ խոքին, էս իմ խիղճը, որ խաբար չեմ**»⁵:

Հեքիաթում հանդիպող երդումների այս տեսակում վկայակոչվող կենսական նշանակություն ունեցող առարկաները (հաց, գինի և այլն) սովորաբար ունեն կրոնական և ծիսապաշտամունքային բնույթ, քանի որ պատկանում են քրիստոնեական և ժողովրդական հավատալիքների ոլորտներին: Այսպես, «Շահմարան թաքավորը» հեքիաթում ոգիների ու աստվածների զորության նկատմամբ ունեցած երկյուղի ու հավատի գիտակցությամբ է հերոսուհին հավատարմության երդում տալիս՝ «**Ախչիկը**

¹ՀԺՀ հատ. IV, Երևան, 1963, էջ 26:

²Տե՛ս, «Էմինեան ազգագրական ժողովածու», հատ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901:

³Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, 2013, էջ 175:

⁴ՀԺՀ հատ. III, Երևան, 1962, էջ 415:

⁵Ղոեջյան Լ., անձնական հավաքածու (ծեռագիր):

երդում կերավ, ասավ.- Հացը-գինին, տեր կենդանին, դու իմն ես, ես քոնն եմ»¹, կամ «Հելուզակ թագուհին» հեքիաթում իր ազնվությունն է ապացուցում դևը՝ «Առավ իր տունը գնաց, խացը կերան, դեն ասեց. -«Խաց ու գինին, տեր կենդանին» քո տան պես արխային քնի, ես մուխանաթ մարդ չեմ»²:

Որպես երկրագործական մշակույթի տարրեր՝ հայկական միջավայրում հացի ու գինու վաղեմի պաշտամունքի արմատներն աղերսվել են նախնական բնապատական ըմբռնումներին³, որն հետագայում քրիստոնեական նոր կրոնի ազդեցությամբ վերաիմաստավորվել է, դարձել Քրիստոսի մարմինն ու արյունը խորհրդանշող հավերժ կենդանացնող աստվածային մասունք⁴: Հաց, գինի, տեր կենդանի եռամիասնությամբ երդման գործառույթը էլ ավելի արժանահավատ է դարձնում երդվողի խոսքը: «Հացը մեռնող և հարություն առնող ցորեն հատիկի վերջնական դրսևորումն ու սրբազան կենդանություն պարգևողն է: Գինին, ըստ ավանդության ու հնագույն ընկալումների, մարդասպան և ոչնչացնող էության կրող է, որի հետագա օգտագործման փորձառությունը հանգեցրել է չափավոր քանակի կիրառման օգտակարությամբ: Գինու կենդանարար հատկությունն ամփոփված է չափավոր քանակի մեջ: Վերոհիշյալ հատկությունների շնորհիվ հացն ու գինին ընկալվել են որպես հավատալիքային այնպիսի սրբազան արժեքներ, որոնց վկայակոչումն ամրապնդում է երդման բանաձևի ցանկալի հետևանքը: Ուստի հացի և գինու վկայակոչմամբ երդումներն առաջնային դեր ունեն և խարսխված են դրանց կենդանություն պարգևող հատկանիշի վրա»⁵, ինչպես, օրինակ, «Էս հացը վկա», «Էս հացինը քոռ եշիմ, թա...», «Տակ հաժի կարող էլնիմ»,⁶իսկ օտարահունչ «Գինին հայի հավատն է»⁷ բովանդակությամբ ասացվածքում տրված է օտարի հայացքով հայերի պաշտամունքային վերաբերմունքը գինու նկատմամբ: Վերոհիշյալ եռամիասնության մեջ կարևոր է հատկապես «Տեր կենդանի» արտահայտությունը, որը խորհրդանշում է հավերժական կենդանությամբ ու զորությամբ օժտված աստվածային էությունը: Այս ըմբռնումը լավագույնս դրսևորված է հայոց հետևյալ կենաց մաղթանքում՝ «Կենդանություն», -ասում է կենաց խմողը, «Անուշ անմահություն», -պատասխանում է կենացի տերը:

¹ՀԺՀ հատ. XVIII, Երևան, 2016, էջ 127:

²ՀԺՀ հատ. III, Երևան, 1962, էջ 265:

³Հարությունյան Ս., նշվ. աշխ., էջ 232:

⁴Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հոբոսյան Ս., Ավետիսյան Ս. «Գինին հայոց ավանդական մշակույթում», Երևան, 2005, էջ 285:

⁵Խենյան Է., Առած-ասացվածքները, երդումները և դարձվածները որպես կայուն բանաձևերի ատաղձ Կարսի հեքիաթներում, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ XX, Գյումրի, 2017, էջ 10-11:

⁶Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, 2013, էջ 572-573:

⁷Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960, էջ 286:

Հին Կտակարանում երդման ամենատարածված ձևերից է «Տեր կենդանի» կամ «Աստված կենդանի» արտահայտությունը և նշանակում է՝ Աստված ներկա է, վկա է խոսքին¹:

Հեքիաթներում հանդիպում ենք նաև սուտ երդման օրինակների, որոնց նպատակն է կեղծել ճշմարտությունը, դիմացինին մոլորության մեջ գցել, և հակառակ դրան՝ հիշատակվում են սուրբ արժեքներ, որոնց վկայակոչումն արդեն արժանահավատ է դարձնում երդվողի խոսքը, ինչպես օրինակ՝ **«Ինչքան երդում կուտի, թե թող, ես քուկդ եմ,դու՝ իմը, չհավատաս: Եթ օր կըսէ՝ հացն ու գինին, տեր կենդանին վկա, բան չես ըսէ»**,² կամ՝ **«Մինչև քոն ընիլը նա ըսըլական ա. «Ով պարի մարթ, վար էս լվորունը ըրալ ըս, մեյդան փուս եք»:** Ամմու փուս փուս չիկյաս, մինչև երթումնը չօտե ուրան ջադու ըխճըկորցը անումավը»³:

Հայոց հնագույն արևապաշտության հետքերը, որոնք իրենց արմատներով գնում են քաղաքակրթական մշակույթի խորքերը, դրսևորում են գտել նաև ժողովրդական երդումներում: Ժողովրդական պատկերացումներում արևը միշտ ընկալվում է իբրև կյանքի գոյության և կենդանության խորհրդանիշ: Արևով (հատկապես որևէ մեկի) երդումները հանդիպում են նաև հեքիաթներում: Եղբայրը՝ որպես հոգեհարազատ ու նվիրական անձ, արժանի է խոր հարգանքի և պաշտամունքի, հետևաբար նաև երդման: Օրինակ՝ «Խաղ անելիս տեղը մինն ասըմ ա.- **Իմ ախպորարևը**, մինն ասըմ ա.-**Իմ ախպոր արևը**: Տենց օրթում են ուտըմ»⁴:

Վկայակոչումը կարող է լինել ինչպես սեփական անձի, այնպես էլ դիմացինի արևով կամ Աստծու անունով: Իր ճշմարտացիությունը հաստատելու և խոստացված գործն ավարտին հասցնելու համար հերոսը երդվում է. «Հավատա, **երդվում եմ իմ ու քու արևով, երդվում եմ ասսու աննով**, օր ես էնոր հետ լեզու չը թաթխեմ: Առավոտ բերեմ թասլիմ էնեմ քեզի»⁵:

Երդման ծեսը սովորաբար ենթադրում է վկաների ներկայությամբ խոսքային բանաձևի արտասանում, որն ուղեկցվում է մի շարք գործողություններով (պաշտամունքային առարկաների հպումով կամ այն համբուրելով, ձեռքով սեղմելով, խաչակնքելով և այլն): «Անդրանեկի խեքլաթը» հեքիաթում, թագավորը հերոսների ասածների իսկության մեջ համոզվելու համար ստիպում է, որ երդվեն կրոնաձիսական սրբազան առարկաներով. **«Թագավորը բերեց կապեց օրթումի. «Չարգյար, դու կերթվա՞ս, օր էսի քու շինած ապրանքն ա: - Խա՛, թագավոր: Բերեց խաչ-**

¹Մանրամասն տե՛ս, Համբարձումյան Հ., Հացն ու գինին. Որսը, խնջույքն ու սննդային կոդերը «Սասնա ծռեր» էպոսում և միջնադարյան գրականության մեջ, Երևան, 2024, էջ 184:

²Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, 2013, էջ 49:

³ՀԺՀ հատ. V, Երևան 1966, էջ 380:

⁴ՀԺՀ հատ. XVIII, Երևան, 2016, էջ 342:

⁵Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, 2013, էջ 314:

Ավերարան դրեց, տերտեր բերեց կայնցուց, Անդրանեկին ասավ.- Արի երթվա՛, թե իմն ա: Անդրանեկն երթվաց, քաշվավ կրաղ կայնավ...»¹:

Այսպիսով, երդման կիրառությունը հեքիաթի համատեքստում պայմանավորված է ծիսահմայական բանաձևերի գերբնական հավատալիքով, որն էլ հստակ պատկերացում է տալիս ինչպես վերոնշյալ բանաձևային այդ կառույցի՝ հնուց ի վեր ակտիվ կենցաղավարման ու կիրառության, այնպես էլ ժողովրդի կյանքում դրա ունեցած մեծ դերի մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Էմինենան ազգագրական ժողովածու, հատ. Ա, Մոսկվա-Ալեքսանդրապոլ, 1901:
2. Թումանյան Հովհ., Երկերի հատ. 5, Երևան, 1959:
3. Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, ժողովեց Տիգ. Վարդանյանց, Թիֆլիս, 1900:
4. Խեմչյան Է., Առած-ասացվածքները, երգումները և դարձվածները որպես կայուն բանաձևերի ատաղձ Կարսի հեքիաթներում, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ XX, Գյումրի, 2017:
5. Կարս. հայոց բանահյուսական մշակույթը, Երևան, 2013:
6. Հարությունյան Ս., Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ, Երևան, 1975:
7. Հարությունյան Ս., Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965:
8. Հարությունյանի Ս., Բանահյուսական նյութերի անձնական հավաքածու (ծեռագիր):
9. Համբարձումյան Հ., Հացն ու գինին. Որսը, խնջույքն ու սննդային կոդերը «Սասնա ծռեր» էպոսում և միջնադարյան գրականության մեջ, Երևան, 2024:
10. Հարությունյան Ս., Քալանթարյան Ա., Պետրոսյան Հ., Սարգսյան Գ., Մելքոնյան Հ., Հոբոսյան Ս., Ավետիսյան Ս., «Գինին հայոց ավանդական մշակույթում», Երևան, 2005:
11. Հայ ժողովրդական հեքիաթներ հատ. I, Երևան, 1959:
12. Հայ ժողովրդական հեքիաթներ հատ. II, Երևան, 1959:
13. Հայ ժողովրդական հեքիաթներ հատ. III, Երևան, 1962:
14. Հայ ժողովրդական հեքիաթներ հատ. IV, Երևան, 1963:
15. Հայ ժողովրդական հեքիաթներ հատ. V, Երևան, 1966:
16. Հայ ժողովրդական հեքիաթներ հատ. XVIII, Երևան, 2016:
17. Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960:
18. Ղոնջյան Լ., Բանահյուսական նյութերի անձնական հավաքածու (ծեռագիր):

¹ՀԺՀ հատ. XVIII, Երևան, 2016, էջ 21:

19. Մանանայ, ժողովեաց և ի լոյս էած Գ. Վ. Սրուանձտեանց, Պոլիս, 1876:

OATH IN ARMENIAN FOLK TALES AND BELIEFS

GHREJYAN LUSINE

*PhD in Philological Sciences, Associate Professor,
Researcher of the Institute of Archaeology and Ethnography
Lecturer, Gavar State University
e-mail: lgrejyan@yandex.ru*

BAGOYAN ALLA

*Lecturer, Gavar State University
e-mail: allabagoyan@mail.ru*

Magical folklore occupies a large place in the field of studying ancient beliefs, religious ideas and worldviews of ancient peoples and is of important historical and cultural value in the field of identifying and illuminating their primitive thinking and poetic perception.

As in the case of other spell formulas, for example, curse, blessing, good wishes, the basis of an oath is the idea of the enchanting power of the word, relying on which the oath-giver refers to shrines and those objects that were always considered sacred by people.

The oath, as a traditional figurative formula of folk discourse, also appears in folk tales.

Thus, the use of an oath in the context of a fairy tale is determined by the belief in the supernatural power of ritual and enchanting formulas, which gives a clear idea of both the existence and use of the mentioned formulaic structures since ancient times, and of its great role in the people's life.

Keywords: *magical applied folklore, ritual-enchanting formula, fairy tale, oath, belief, curse, examination.*

КЛЯТВА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ И ВЕРОВАНИЯХ

КРЕДЖЯН ЛУСИНЕ

*Кандидат филологических наук, доцент
Научный сотрудник Института археологии и этнографии НАН РА
Преподаватель ГГУ
электронная почта: lgrejyan@yandex.ru*

Магический фольклор занимает большое место в области изучения древних верований, религиозных представлений и мировоззрения древних народов и представляет важную историко-культурную ценность в области выявления и освещения их первобытного мышления и поэтического восприятия.

Как и в случае с другими заклинательными формулами, как, например, в случае проклятия, благословения, благопожелания, так и в основе клятвы лежит идея магической силы слова, опираясь на которую дающий клятву ссылается на святыни и на те предметы, которые всегда считались народом священными.

Клятва, как традиционная образная формула народно-разговорной речи, проявляется также и в народных сказках.

Применение клятвы в контексте сказки обусловлено верой в сверхъестественную силу ритуально - магических формул, дающих четкое представление как о бытовании и использовании упомянутых формульных конструкций с древнейших времен, так и о ее большой роли в жизни народа.

Ключевые слова: магико-прикладной фольклор, ритуально-магическая формула, сказка, клятва, поверье, проклятие, освидетельствование.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 05.09.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 19.09.2024թ.:

Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.: